

Թեստ 6

1. Ո՞րն է այն վեցանիշ թիվը, որի միավորը 2 է, հազարավորը՝ 4, իսկ մյուս բոլոր թվանշանները՝ 9:

1) 994929

2) 999499

3) 994992

4) 999992

2. Ո՞ր շարքում են թվերը դասավորված աճման կարգով.

1) 1, 10, 333, 4044, 5595

2) 1001, 101, 20001, 212

3) 1021, 1020, 1002, 2

4) 223, 222, 18, 19

3. Ո՞ր շարքի բոլոր թվերն են պատիկ 8-ին.

1) 8, 16, 24, 32, 28

2) 8, 80, 800, 40, 16

3) 18, 28, 68, 38, 68

4) 7, 9, 11, 21, 32

4. Զանի՞ սանտիմետր է $2/5$ մետրը:

1) 30

2) 40

3) 250

4) 100

5. Գտի՛ր թիվը, որը 7-ի բաժանելիս ստացվում է 5 և 3 մնացորդ:

1) 36

2) 37

3) 38

4) 39

6. Ո՞րն է թվի գրույթյան 3-րդ կարգի կարգային միավորը:

1) 1

2) 10

3) 3

4) 100

7. Ինչպե՞ս կփոխվի երկու թվերի գումարը, եթե գումարելիներից յուրաքանչյուրը մեծացնենք 12-ով:

1) Կմեծանա 24-ով

2) Կմեծանա 12-ով

3) Կփոքրանա 12-ով

4) Կփոքրանա 24-ով

8. Ընտրիր այն թվանշանը, որը տեղադրելով աստղանիշի փոխարեն՝ կստացվի ճիշտ անհավասարություն.
 $8g \ 840կգ < 8g \ *40կգ:$

1) 8

2) 1

3) 9

4) 7

9. Ընտրիր այն պատասխանը, որն արտահայտում է 6 ժամ 35 րոպեն րոպեներով.

1) 335

2) 395

3) 525

4) 751

10. Ջրավազանում կար 3200 լիտր ջուր: Այգին ջրելու համար օգտագործվեց դրա $\frac{5}{8}$ մասը: Քանի՞ լիտր ջուր մնաց ջրավազանում:

1) 2000

2) 1200

3) 6400

4) 1600

11. Գրիր երկու քառանիշ թիվ, որոնք բաժանվում են և՛ 2-ի և՛ 3-ի:

1002, 1008

12. Ուղղանկյան երկարությունը 120 մ է, իսկ լայնությունը կազմում է նրա $\frac{3}{4}$ -րդ մասը: Գտիր ուղղանկյան պարագիծը:

420 մ

13. Լրացրու բաց թողնված բառը(բառերը) ճառագայթ է կոչվում երկրաչափական այն պատկերը, որն ունի սկիզբ, բայց **չունի վերջ**:

14. Հաշվիր $220:(5+10:2)-2*10+6:(1+2)$ արտահայտության արժեքը:

4

15. Պարկում կա 2 կանաչ, 4 դեղին և 7 կարմիր խնձոր: Առանց նայելու ամենաքիչը քանի՞ խնձոր պետք է հանել, որպեսզի դրանց մեջ լինեն տարբեր գույնի խնձորներ:

$4+7+1=12$

12 խնձոր

16. Երբ ուղղանկյան լայնությունը մեծացրեցին 5 սմ-ով, իսկ երկարությունը՝ 10 սմ-ով, ապա ստացված ուղղանկյան պարագիծը հավասարվեց 80 սմ-ի: Որքա՞ն էր ուղղանկյան պարագիծը:

$5+5+10+10=30$

$80-30=50$

50 սմ

17. Սովորողը տնային հանձնարարությունը կատարեց 1 ժամ 15 րոպեում: Այդ ժամանակի $\frac{1}{5}$ -րդը նա օգտագործեց մաթեմատիկայի հանձնարարությունը կատարելու համար, 18 րոպեն մայրենիի հանձնարարությունները կատարելու համար,

իսկ մնացած ժամանակը պատմվածք կարդալու համար: Քանի՞
րոպե հատկացվեց պատմվածք կարդալու համար:

$$75:5=15$$

$$75-15=60 \text{ ր}$$

$$60-18=42$$

$$42 \text{ րոպե}$$